## ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

# ՆՈՐԱՅՐ Ն. ԲԻՒԶԱՆԴԱՑՈՒ ԱՆՏԻՊ «ՀԱՏԸՆՏԻՐ ՏԱՂԱՐԱՆ»Ը

*Նորայր Ն. Բիւզանդացին եղել է դժբախտ բանասէր այն իմաստով, որ հնարաւորութիւն չի ունեցել հրատարակելու ոչ միայն իր բոլոր, այլև գոնէ ամենակարեւոր աշխատութիւնները։ Իր հաշուին Պոլսում տպագրել տուած* «Հայկական բառաքննութիւն» (1880) *փոքրիկ աշխատանքը նրան յայտնի դարձրեց որպէս գրաբար բնագրերի խելացի սրբագրիչի, չուէքդուհի կնոջ մեկենասութեամբ լոյս ընծայած* «Բառագիրք ի գաղղիերէն լեզուէ ի հայերէն» *հոյակապ բառարանը* (*Պոլիս*, 1884) *նրան հռչակեց, ըստ մեզ, փայլուն բառարանագիր*, 1900 *թ. Թիֆլիսում «Իզմիրեանց մրցանակի» յանձնաժողովի հրատարակած* «Կորիւն Վարդապետ եւ նորին թարգմանութիւնք» *խորագրին ուսումնասիրութիւնը, բանասիրական մի քանի յօդուածները նրան ապահովեցին անմահ բանասէրի դիրք։ Սակայն նա թողել է բանասիրական անտիպ գործեր, որոնք է՛լ աւելի են փայլ տալիս նրա այս եռապատիկ փառքին և հրատարակութեան դէպքում կարող են օգտակար լինել նրա «համազգեացին», որոնց համար է միայն աշխատել, ինչպէս ինքն է բազմիցս յիշեցրել։ Բացի դրանցից, Շուէդիայի Գէօթեբորգ քաղաքի համալսարանի կենտրոնական գրադարանում գտնուող նրա դիւանում պահւում են անտիպ միջնադարեան տաղերի նիւթեր և դրանցից նրա պատրաստած* «Հատընտիր տաղարան»*ն ու* «Յաւելուած»*ը, որոնք բացայայտում են նրա վաստակի անծանօթ մնացած մի փայլուն էջը։ Տաղերին վերաբերող միաւորները հետևեալներն են ըստ թղթապանակների ու վաւերագրերի համարների հերթականութեան և ոչ թէ ըստ նիւթերի խելացի դասաւորութեան, որը բացակայում է ամբողջ դիւանից։ Փակագծուած նշումները մերն են։*

Նորայրի դիւանում Տաղերին վերաբերող անտիպ նիւթեր

Թղթապանակ Fol. 4:o. 1–14

1. *Վաւերագիր* 4:1. *ՅԱՒԵԼՈՒԱԾ «ՀԱՏԸՆՏԻՐ ՏԱՂԱՐԱՆԻՍ»*, *էջ* 385–646. (*ընդօրինակել է* 1906–1911 *թթ., սկիզբը տե՛ս տառ, թ.* 39։ *Նորայրը սովոր է եղել գրածների և ընդօրինակածների թուականները նշել*)։

2. *Վաւ.* 4:2. Ընդարձակ բառոյական տաղ, վերագրեալ Առաքելոյ, Ոսկեան Իմաստնոյ, Իմաստնոյ, Յովհաննէս Պլուզ Վարդապետի կամ լոկ Պլուզ Վարդապետի, Ֆրկան, Գիւլպիւլ Վարդապետի, 38 *էջ*, 28 *սեպտեմբեր* 1906։

3. *Վաւ.* 4:4. Տաղք Յովհաննու Վարդապետի Երզնկայեցւոյ, 24 *էջ*, 27 *հոկտեմբեր* 1906։

4. *Վաւ.* 4:5. Գրնձէ քաղաք, ըստ Ռ. Տաղարանին Ս. Ղազարու, թիւ Ձեռ. 529. Բ. գ., *երեսք* 1–99. «*Ընդօրինակեմ նոյնութեամբ անփոփոխ պահելով գրչութիւնն և զկիսագրութիւն, գլխագրելով միայն զյատուկ անուանս*», 31 *օգոստոս* 1906, 30 *էջ*։

5. *Վաւ.* 4:6. Առաքելի Սիւնեցւոյ տաղաչափութիւնք, 85 *էջ*, 27 *օգոստոս* 1906։

Թղթ. 4:o. 1:1–14

6. *Վաւ.* 1:1. Տաղարան Ս. Ղազարու, 22 *էջ*, 21 *օգոստոս* 1906։

7. *Վաւ.* 1:2. Տաղարան Ս. Ղազարու, 24 *էջ*, 24 *սեպտեմբեր* 1906։

8. *Վաւ.* 1:3. Գրնձէ քաղաք, *էջ* 220–223, 11–12 *մայիս* 1906 (*ընդօրինակութիւն առանց ձեռագրի նշման*)։

9. *Վաւ.* 1:4. Սասանայ, Ազամ, Քրիստոս (*և այլ տաղեր*), 33 *էջ*, 1906։

10. *Վաւ.* 1:14. Տաղեր ըստ Տաղարանին 1589 թուոյ, 14 *ապրիլ* 1906։

digitised by A.R.A.R.@

Թղթ. 4։օ. 4։1-5

11. *Վաւ.* 4։2. Կարապետ Վարդապետի Տաղ աշխարհացոյց գեղեցիկ, 6 *էջ*, 1565։

Թղթ. 4։օ. 5։1-20

12. *Վաւ.* 5։3. Նահապետի Խառակոնիսացւոյ Տաղք սիրոյ ի ձեռն Տաղարանէն Ս. Ղազարու, *էջ* 404 (*եղն.*), 110 *էջ*, 13 *յունուար* 1899-4 *մարտ* 1899 (*սեւագիր ընդօրինակութիւն*)։

13. *Վաւ.* 5։4. (*Նախորդից, սեւագիր արտագրութիւն*, 6 *էջ*)։

14. *Վաւ.* 5։11. «Հայերէնի Տաղարան» հայ բանաստեղծից ի դարուն ԺԲ-ԺԸ, 21 *յուլիս* 1902 *և* 30 *սեպտեմբեր* 1905, 44 *էջ*. 1903, 52 *էջ* (*սեւագիր արտագրութիւն։ Այստեղ կան նաև տեղեկութիւններ տաղասացների և տաղերի մասին*)։

15. *Վաւ.* 5։12. Բառք Տաղից Նահապետի Խառակոնիսացւոյ ի «Բառագիրք հայոց Dictionarium armenum-latinum» *Ֆրանկիսկոս Ռիվոլայ*, 16 *հոկտեմբեր* 1905, 35 *էջ*։

16. *Վաւ.* 5։15. Նահապետի Խառակոնիսացւոյ Տաղք սիրոյ, ի ձեռն Տաղարանէն Ս. Ղազարու, 11 *էջ*, 31 *յուլիս* 1905։

Թղթ. 4։օ. 9։1-39

17. *Վաւ.* 9։21. Տաղ բռչնոց, 8 *էջ*։

18. *Վաւ.* 9։25. Կոստանդնի Երզնկայեցւոյ երկու տաղք սիրոյ, 12 *էջ* (*և նամակ Հ. Մկրտիչ Պոտուրեանին*, 3 *հոկտեմբեր* 1905)։

19. *Վաւ.* 9։35. Տաղ որբոյն Սեփանոսի, 4 *էջ*, 8 *յունիս* 1895։

20. *Վաւ.* 9։37. (*Ինչ-որ տաղ*, 8 *էջ*)։

Թղթ. 4։օ. 10։1-19

21. *Վաւ.* 10։2. Տաղք Նահապետի Խառակոնեցւոյ Քուչակ կոչեցելոյ, 4 *էջ*, 21 *նոյեմբեր* 1905։

22. *Վաւ.* 10։6. Տաղ (*անվերնագիր, սկսուածք*՝ «Այսօր չեմ ի զար ի քեզ»), 4 *էջ*, *Ձեռ. Ս. Ղազարու, Թ.* 160. *բ. գ.*, *էջ* 189-207։ (*Ընդօրինակութիւն Հ. Մ. Պոտուրեանի*, 9 *յունիս* 1906)։

23. *Վաւ.* 10։7. (*Նամակ Հ. Եսայի Վ. Տայեցուն*, 6 *դեկտեմբեր* 1908, «*Տաղ Թռչնոց*»*ի վերաբերեալ*, 7 *էջ*)։

Թղթ. 4։օ. 11։1-28

24. *Վաւ.* 11։12. *ՏԱՂԱՐԱՆ ՆԱՀԱՊԵՏԻ ԽԱՌԱԿՈՆԵՑԻՈՅ ՔՈՒՉԱԿ ԿՈՉԵՑԵԼՈՅ*, 148 *էջ*, 1906։ Մասն առաջին, Տաղք սիրոյ, *էջ* 1-135։ Մասն երկրորդ, Տաղք պանդխտի, *էջ* 136-141։ Մասն երրորդ, Տաղք սրափականք, *էջ* 142-148։

25. *Վաւ.* 11։13. Նահապետի Խառակոնեցւոյ Տաղք սիրոյ, 166 *էջ*, 1905։

26. *Վաւ.* 11։14. Նահապետի Խառակոնիսացւոյ Տաղք սիրոյ, 32 *էջ*, 29 *օգոստոս* 1905։

27. *Վաւ.* 11։15. Պանդուխտ առ կռունկն (2 *տարբերակ*), «Հոգի՛, մի՛ ասեր ղարիպ», Հոգեւորական կամ սօնական տաղեր, 15 *էջ*, 11 *օգոստոս* 1905։

28. *Վաւ.* 11։16. Տաղարանք եւ Տաղասացք, 43 *էջ* (*մատենագիտութիւն*), 5 *նոյեմբեր* 1902։

29. *Վաւ.* 11։17. Ընդարձակ բարոյական տաղ, 44 *էջ* (*սեւագիր արտագրութիւն*), 11 *հոկտեմբեր* 1906։

30. *Վաւ.* 11։18. Յովհաննէս Վարդապետի Տաղ բռչնոց, հանեալ ի մատենադարանէ գրչագրաց 33. Անտոնեան Հարց յՕրթաքէօյ, 26 *էջ*։

Թղթ. 4։օ. 12։1-25

31. *Վաւ.* 12։1. Առաքեալ կամ Առաքել Սիւնեցի, *էջ* 1-48։ Առաքել Բաղիշեցի, *էջ* 49-108։ 28 *նոյեմբեր* 1902-3 *յունիս* 1903։

32. *Վաւ.* 12։3. Տաղ սիրոյ գեղեցիկ, 7 *էջ*, 11 *սեպտեմբեր* 1905։

33. *Վաւ.* 12։4. Ցուցակ մատենագրութեանց եւ թարգմանութեանց ԺԲ-ԺԷ դարուց չեւ եւս հրատարակելոց, 44 *էջ*, 14 *փետրուար* 1890 (*աստղանիշով նշուած են նաև*

digitised by A.R.A.R.@

տպագիրները. կան նաև տաղառացներ։ Սևագիր, մաքուրն ուղարկել է Վիեննա, Հ. Գ. Յովնանեանին)։

34. Վաւ. 12:6. Տաղ սիրոյ, Տաղ մենլիսի, 26 յունիս 1896, 4 էջ։

35. Վաւ. 12:10. Այլ տաղ վասն բարեգործութեան մարդկան ի Տիրիկիէ աշխարհականէ ասացեալ, 3 էջ, 4 նոյեմբեր 1905։

36. Վաւ. 12:14. Առ Տէր Արշակ Չօպանեան, 9 մարտ 1906 (տաղերի նրա հրատարակութեան և ֆրանսերէն թարգմանութիւնների մասին դիտողութիւններ Ա. Չօպանեանի իսկ խնդրանքով, 26 էջ սևագիր, մաքուրն ուղարկել է նրան, Փարիզ)։

37. Վաւ. 12:15. Առաքելի Սիւնեցւոյ Տաղաչափութիւնն, 10 էջ, 15 սեպտեմբեր 1906 (տաղերի վերնագրեր, սևագիր)։

38. Վաւ. 12:19. Առաքել խորհեաց, 3 էջ (բառերի բացատրութիւն, ուրիշի էլ ձեռքով, իր յաւելումներով և սրբագրութիւններով)։

39. Վաւ. 12:23. ՅԱՒԵԼՈՒԱԾ ԻՄ «ՀԱՏԸՆՏԻՐ ՏԱՂԱՐԱՆԻՍ», էջ 1–384, 11 սեպտեմբեր 1905ից սկսած (շարունակութիւնը տե՛ս ստոր, թ. 17)։

Թղթ. 3:օ. 43:31–46

40. Վաւ. 4:31. Տաղարան ԺԶ Ս. Ղազարու, Ձեռ. թ. 330. դ. բ., 6 էջ (սևագիր ընդօրինակութիւն), 2 նոյեմբեր 1905։

41. Վաւ. 4:32 }
42. Վաւ. 4:33 } —Ակ —եակ եւ —ակ կամ —էկ —իկ —ուկ նուազական կամ փաղաքշական մասնիկք Նահապետի Քուչակի (և ուրիշների տաղերում), 30 էջ, 23 յունուար 1906։

43. Վաւ. 4:34. Տաղարան Նահապետի Խառակոնեցւոյ Քուչակ կոչեցելոյ, 12 էջ, Վերջին յարդարումն (Տաղարանի բաժանումն ըստ մասերի), 12 էջ, 9 նոյեմբեր 1906։

44. Վաւ. 4:35. (նոյնից) 24 էջ, 26 Յունուար 1906 (մասամբ գծերով ջնջուած սևագրութիւն)։

45. Վաւ. 4:36. Տաղք Նահապետի Քուչակի ի Տաղարանն Ս. Ղազարու, 5 էջ, 4 օգոստոս 1905։ Տեղեկութիւնք զՆահապետէ Քուչակէ, էջ 6–13։

46. Վաւ. 4:37–38. Ընթերցմունք Նահապետի Խառակոնեցւոյ, էջ 1–9 և 1–16, 20 յունուար 1906։ (Մէջ է բերել այն տաղերը, որ ուրիշ հեղինակներ բանաքաղել են Քուչակի տաղերից)։

47. Վաւ. 4:39. Դիտողութիւնք ի տաղս Նահապետի Խառակոնեցւոյ, էջ 1–44 (մասամբ ջնջուած սևագիր)։

48. Վաւ. 4:40–42. Հայրենիք Տաղարան Ցանկեաց, 6 յունիս 1906, 50 էջ (սևագիր նշումներ)։

49. Վաւ. 4:43. ՀԱՏԸՆՏԻՐ ՏԱՂԱՐԱՆ, 608 էջ (վերանայուած, համեմատուած և սրբագրուած)։

50. Վաւ. 4:44–46. (Տաղերի մասին զանազան նշումներ, 60 թերթիկ)։

Թղթ. 8:օ. 5:1–31

51. Վաւ. 5:1. (Տաղեր, 60 էջ թղթիկների վրայ)։

Թղթ. 8:օ. 4A:1–30

52. Վաւ. 5:8. (Տաղեր, 86 էջ, ուրիշի ընդօրինակութիւն)։

53. Վաւ. 4:19. Նահապետ Քուչակ, 13 էջ (մի քանի նշումներ և Գ. Փառնակի մի յօդուածի արտագրութիւն), 27 նոյեմբեր 1906։

54. Վաւ. 4:20. Նահապետ Քուչակ, 12 էջ (նշումներ)։

55. Վաւ. 4:21. Քուչակ, Ասուզեկիք, 6 էջ (գծերով ջնջուած)։

56. Վաւ. 4:22–29. Դիտողութիւնք ի Տաղս Նահապետի Խառակոնիացւոյ, էջ 1–133 (զանազան տետրեր, սևագրութիւններ)։

57. Վաւ. 4:30. Գամառ–Քաթիպա, Ազգային երգարան, 1856 (Տաղերի վերնագրեր, 5 էջ), 30 հոկտեմբեր 1905։

digitised by A.R.A.R.@

# ՀԵՏԵՒԵ՛ՆՔ ՆԱԽՆԵԱՑ ՊԱՏՈՒԻՐԱՆՆԵՐԻՆ

*Յուսով եմ, որ գոնէ այժմ Մինասեանի համար պարզ է, թէ ով է իրականում «արդար ու անխարդախ» և ով անարդար ու խարդախ բանավէճի իրական հեղինակը։ Սակայն անհրաժեշտ է շարունակել Մինասեանին բացատրել, որ ինքը սխալուել է նաև բոլոր այն դէպքերում, երբ չի կարողացել զսպել իր զայրոյթը և ինձ հասցէագրել է այնպիսի արտայայտութիւններ, որոնք անյարմար է գործի կցել տպագիր բանավէճում և որոնք ինձ հարկադրում են անպայման արձագանգել։ Օրինակ, կարիք կա՞ր ինձ այսպէս ծաղրելու. «Գ. Արգարեանը* երգէր ձեռագրի *«հնադարեան իմաստը» փնտռել է Խորենացուն ժամանակակից հայերէն մատենագրութեան մէջ և յայտնաբերել է ... երբայերէնո՞ւմ ... կարծեմ, շատ շատերը լսած կը լինեն «Կոլոմբոսի հաւկիթը» վերնագրուող «անեկդոտը»* (140)։ *Մի՞թէ կարիք կայ Մինասեանին բացատրելու, որ անեկդոտը վերաբերում է այն դէպքերին, երբ շատ հասարակ մի բան գտնելու համար դիմում են խրթին ճանապարհների։ Ես երբայերէնին դիմել եմ ցոյց տալու համար այն, ինչ հասարակ ճանապարհով (Աստուածաշնչի յունարէն և հայերէն բնագրերի միջոցով) հնարաւոր չէ գտնել, այսինքն ցոյց եմ տուել, որ «երգէր ձեռամբը»ի իմաստը պարզում է երբայերէնը, որում բառակապակցութիւնը նշանակում է նուագել և ոչ թէ պարել, ինչպէս կարծում է Ուլուբաբեանը։ Արժե՞ր իմ արածը կտրել միջավայրից և բանն այնպէս ներկայացնել, թէ պէտք չէր երբայերէնին դիմել։ Չէ՞ որ յունարէնում և հայերէնում «նուագել» բառը չկայ։ Մինասեանը «Կոլոմբոսի հաւկիթը» յիշելու փոխարէն պիտի յիշէր, որ ինքը հենց «Գ. Արգարեանի հետախուզութեան հետքերով» գնալու շնորհի՛ւ է, որ դիմել է երբայերէնին և վերստին հաստատել է Արգարեանի հաստատածը։*

*Երբ Առակաց գիրքը կապւում է Մեսրոպ Մաշտոցի, իսկ Թագաւորութեանց գիրքը՝ Մովսէս Խորենացու անունների հետ, այդ որբացած անուններն աւելի դիւրին են դարձնում գրքերը յիշատակե-*

Թղթ· 8:օ· 9:1–30· 9:14 + 1 bl· 9:24 + 4 bl·

58· *Վաւ·* 9:15· Քաղուածոյք ի Լոյս պատկերազարդ շաբաթաթերթէն, Կ. Պոլիս, 1908, Տաղեր, 10 *էջ·* 18 *և* 28 *յունուար* 1912։

Թղթ· 8:օ· 12

59· *Վաւ·* 12–6· Կոստանդին Երզնկացի (*տաղերի տպագրական սրբագրական մամուլներ, էջ* 81–176, *ԻԳ, սկիզբը չկայ*)։

Թղթ· 8:օ· 16:1–38

60· *Վաւ·* 16:4· Բառգիրք ազգային Տաղարանին (*Ա սկզբնատառով բառեր*), 12 *էջ*։

Թղթ· 8:օ· 20:1–41

61· *Վաւ·* 20:12· Երգ Պլուզ Վարդապետի ասացեալ, Տաղարան Գ., թիւ 234, Ս. Ղազար, 2 *նոյեմբեր* 1906 (*Հ. Մ. Պոտուրեանի ընդօրինակութիւն*)։

Թղթ· 8:օ· 23:1–40

62· *Վաւ·* 23:26· (*Նշումներ՝ Մարտիրոս Ղարաճասրի, Մարտիրոս Խարբերդցի, Զաքարի եպիսկոպոս Գնունեցի, Թաթոս Եւդոկիացի, Մովսէս Վրդ. Երզնկայեցի, Գէորգ Վրդ. Սկեւռացի, Յովսէփ Սեբաստացի, Ֆրիկ, Սուքիաս Վրդ.*), 32 *էջ*, 16 *մայիս* 1906 *և* 6 *հոկտեմբեր* 1911։

(Վերջ)

*ՄԱՐՏԻՐՈՍ ՄԻՆԱՍԵԱՆ*
*Ժնեւի համալսարան*

digitised by A.R.A.R.@